

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա/Ձ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ-Ն ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Ամառային արտահագուստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Կտորի բաղադրությունը՝ 51% բամբակ և 49% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 212գր/մ2: Կտորը պետք է լինի ջրադիմացկուն, հակաստատիկ թելով գործվածքով, որի 1*1 հատվածին ընկնի 1 սմ հակաստատիկ թել, ունենա դիէլեկտրիկ հատկություն: Գույնը՝ կապույտ, դեղինի համադրությամբ, որոնց երանգները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս 2,500 Н, յուղակայունությունը ոչ պակաս քան 115 պ.մ., ջրակայունությունը ոչ պակաս քան 180 ջրային կաթիլ/մմ: Արտահագուստը պետք է ունենա 7 գրպան, որից 4-ը բաճկոնի վրա, իսկ 3-ը տաբատի, բաճկոնի կրծքավանդակի շրջագծով լուսանդրադարձնող ժապավեն դեղին գույնով: Բաճկոնի թևքերին և տաբատի ծնկամասից ներքև 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ դեղին գույնով: Բաճկոնը լինի կարճեցված գոտիով, կենտրոնական ճարմանդ-շղթայով՝ պաշտպանված կպչուն ժապավենով ամրացող վրադիր դետալով, օձիքը ծալվող: Բաճկոնի եզրային գոտու շրջագծի կողքային հատվածները պետք է կարգավորվի ռետինե ժապավենով: Բաճկոնի կրծքավանդակի ձախ մասում՝ 1 վրադիր գրպան կափույրով, որի վրա պետք է ասեղնագործվի «ԲԷՑ ՓԲԸ» բառերը, իսկ աջ մասում՝ 1 վրադիր գրպան բաց մուտքով: Բաճկոնի թևերը՝ ռետինե ռեզինով, որը պետք է կարված լինի կտորի մեջ: Բաճկոնի վրա՝ հավելյալ վրադիր արմունկի հատվածում: Բաճկոնի վրա 2 կողքային գրպան թեքված մուտքով: Բաճկոնի մեջքի կենտրոնական մասում 18 սմ լայնությամբ պետք է ասեղնագործվի «ԲԱՐՁՐԱՎՈՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ բառերը:</p>

Տաբատը լինի ուղիղ ուրվագիծով: Առաջամասի մուտքի բացվածքը կայծակ-շղթայով և կոճակով, մեջքի հատվածում գոտու կարգավորիչ ռետինե ժապավենով, 2 կողքային գրպան թեքված մուտքով, իսկ հետևի 1 վրադիր գրպան բաց ուղիղ մուտքով: \* Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: \* Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: \* Մասնակիցը պետք է ներկայացնի՝ ամառային արտահագուստի նմուշի մեկական օրինակ և նմուշը պետք է պարտադիր համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Կտորը, որից կարվելու է հագուստը, պետք է ունենա որակի համապատասխանության սերտիֆիկատ, լաբորատոր փորձարկումների արձանագրություն և համապատասխանի GTO 71327041-004-2008, EN ISO 14116, GOST P 12.4.236-2007 ստանդարտներին: Ամառային արտահագուստի քանակները և չափսերը լրացուցիչ կտրամադրվեն Պատվիրատուի կողմից: \* Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ИП Карен Варданян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом РЭС-ЕЦДЦПЗР-23/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	